Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական խորհրդի

Որոշում

Ուսումնական գործընթացի ավտոմատացված համակարգի
ներդրման վիճակը և խնդիրները
/զեկ.՝ Վ.Մելքոնյան/

Արձանագրություն N 5-ք.

Հիմք ընդունելով Ռ.Մակարյանի հաղորդումը՝ գիտական խորհուրդը նշում է, որ համալսարանում ուսումնական գործընթացը արդի տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմամբ առավել արդյունավետ դարձնելու և առկա ծրագրերի հետագա զարգացման նպատակով նախատեսվում է շարունակել նախորդ տարիներին իրականացված միջոցառումների համախումբը և վերը նշված համակարգը ներդնել ամբողջ համալսարանի մակարդակով՝ իրականացնելով Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական խորհրդի 16.05.2018թ. արձանագրություն N 9 որոշման վերաբերյալ հետևյալ ժամկետների և հանձնարարականների փոփոխությունները:

Այս ամենի հետ մեկտեղ առկա են նաև խնդիրներ, որոնք հիմնականում կապված են համալսարանի ուսանողության ու աշխատակազմի շրջանում նոր մեթոդների և ծրագրերի իրագեկման, յուրացման, ինչպես նաև դրանց ներդրման հետ:

Գիտական խորհուրդը որոշում է.

1. Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ռ.Մակարյանին և Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի տնօրեն Վ.Մելքոնյանին.
   1.1 Մինչև 2019թ. հունվարի 25-ը Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի հետ մշակել համակարգի ամբողջական ներդրման համար իրականացվելիք աշխատանքային քարտեզ-ժամանակացույց՝ ներառելով ստորաբաժանումների պարտականությունները:
   1.2 Մինչև 2019թ. փետրվարի 8-ը (Ագրոբիզնեսի և տնտեսագիտության, Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետներ) և 2019թ. ապրիլի 30-ը (Ագրոնոմիական, Ագրարային ճարտարագիտության և Անասնաբուժական-բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետներ) համակարգի լիարժեք ներդրման համար կազմակերպել նախապատրաստական անհրաժեշտ աշխատանքներ,

մասնավորապես, չմուտքագրված աշխատակիցների տվյալների, ամբիոնների ծանրաբեռնվածությունների, առարկայական ծրագրերի և մյուս ելակետային տվյալների մուտքագրման գործընթացը:

2. Հանձնարարել Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի տնօրեն Վ.Մելքոնյանին և Ֆակուլտետների դեկաններին.

   2.1 Մինչև ս.թ. փետրվարի 5-ը (Agրոբիզնեսի և տնտեսագիտության, Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետներ) և ապրիլի 30-ը (Agրոնոմիական, Agրարային ճարտարագիտության և Անասնաբուժական-բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետներ) կազմակերպել դեկանատների բոլոր աշխատակիցների և ամբիոնների անձնակազմերի ուսուցման և վերապատրաստման աշխատանքները:

Գիտական խորհրդի նախագահ՝ Վ.Է.Ուռուտյան

Գիտ. քարտուղար՝ Դ.Ս.Բալասանյան